Վահան Թոթովենց

Աղերսանք

Աճի՛ր, ո՛վ իմ տրտմությունս, ծով եղի՛ր իմ աչքերուս խորը:

Փթթի՛ր և աճի՛ր, վասնզի կուզեմ, որ աչքերս վերջալույս մը ըլլան իմ միջոցիս և իմ անհունության մեջ: Բոլոր կարմրությունները ունեին անոնք, դուն՝ ո՛վ իմ մենավոր տրտմությունս, եղի՛ր ստվերը, եղիր այուքը և հողմը վերջացող սերերուն, եղի՛ր խորհուրդը թափանցիկ գիշերին:

Մայրս պիտի լա հոն, ուշ գիշերին, և պիտի թափե իր մարգարիտները, որոնք իմ երկինքս պիտի աստղալուսեն:

Մա՛յր, բա՛ց կուրծքդ հոն՝ իմ վերջալույսի բարձունքներուն վրա՝ իբրև լուսինկան իմ չարչարված, միսմինակ դաշտերուն ու ամայի տարածություններուն համար:

Ո՛չ մեկ Աստված թող հանդգնի թևել իմ դրության մեջեն: Ես Տիեզերք մըն եմ, իմ վեհությունը Ես ի՛նքս եմ:

Ես բացարձակ եմ իմ անհունության մեջ:

Աճի՛ր, ո՛վ իմ մենավոր տրտմությունս, ծո՛վ եղիր աչքերուս խորը: